



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

<p>ՀԱԱՀ օգնության հարկերի փողից 06 015 թ. հարկերից</p>	<p>Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր Ա. Բարսեղյան 08"02 2015 թ.</p>
---	---

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
 ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Նշանակություն և կիրառման ոլորտ

Սույն ընթացակարգը նախատեսված է ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) գործունեության արդյունավետության գնահատման համար և նախատեսված է վերոհիշյալ դեպարտամենտի կողմից կիրառման համար: Ընթացակարգի նպատակն է՝ մշտադիտարկման և քննարկումների միջոցով գնահատել Դեպարտամենտի գործունեության արդյունավետությունը, բացահայտել թույլ և ուժեղ կողմերն ու բազմակողմանի վերլուծության միջոցով նպաստել Դեպարտամենտի աշխատանքի բարելավմանը՝ Համալսարանի ռազմավարական ծրագրի դրույթներին համապատասխան:

2. Փաստաթղթային հենք

- ՀԱԱՀ ռազմավարական ծրագիր
- Որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման մեթոդաբանություն
- Արտաքին կապերի դեպարտամենտի կանոնադրություն
- Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր
- Համալսարանի գործունեության մշտադիտարկում, չափումներ և ռազմավարական գնահատում
- Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն:

3. Ընթացակարգ

Դեպարտամենտի աշխատանքի արդյունավետության գնահատումը պետք է լինի պարբերական գործընթաց՝ ինքնագնահատման և արտաքին (տվյալ բուհի շրջանակներում) գնահատման մեխանիզմներով:

Ինքնագնահատումը ենթադրում է.

- Դեպարտամենտի ներսում պարբերական քննարկումների անցկացում և խնդիրներ վերհանում
- Դեպարտամենտի կողմից կազմակերպվող հարցումներ շահակիցների շրջանակներում,
- Ֆոկուս խմբերի հետ կազմակերպվող քննարկումներ,
- դիտարկումներ:

Արտաքին գնահատումը ենթադրում է.

- Դեպարտամենտի կողմից կազմված հաշվետվությունների քննարկում և աշխատանքի գնահատում,
- արտաքին շահակիցների շրջանում կատարվող հարցումներ և դիտարկումներ,

- Համալսարանի Որակի ապահովման բաժնի կողմից Դեպարտամենտի գործունեության վերլուծություն՝ որակի կառավարման չափանիշների և չափորոշիչների համապատասխան,
- ֆոկուս խմբերի հետ քննարկումների անցկացում:

4. Արդյունքներ և գնահատական

Վերլուծության արդյունքներն ու գնահատականը քննարկվում է Դեպարտամենտի ներսում, Համալսարանի գիտական խորհրդում, որից հետո կարող են տրվել համապատասխան հանձնարարականներ՝ վերհանված խնդիրների շտկման վերաբերյալ:

5. Արդյունավետության չափման ցուցիչներ.

Արդյունավետության գնահատման ցուցիչները նախատեսված են Դեպարտամենտի աշխատանքի և գործունեության քանակական և որակական գնահատման չափելիության համար:

- Դեպարտամենտի կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետություն
- միջազգային դրամաշնորհային և այլ բնույթի ծրագրերի քանակ
- ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունակության քանակ
- մասնակցություն տարբեր բնույթի միջոցառումների, համաժողովների, քննարկումների (կրթական, գիտական, միջազգային և այլն)
- գործունեության թափանցիկություն